ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

17 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 2017 թ.
№ 15 (1015)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 52 -րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ 95 ՏԱՐԵԿԱՆ Է

«Լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխություն

Նոյեմբերի 10-ին, երիտասարդական տոների շրջանակներում, Մանկավարժականում արդեն 8-րդ անգամ անցկացվեց «Լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխությունը: Համալսարանի Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողու-

➤2

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Մանկավարժական համալսարանի պատվիրակությունը՝ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի գլխավորությամբ, հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 3-ը մասնակցեց Մոսկվայի մանկավարժական պետական համալսարանի 145-ամյակին նվիրված միջոցառումներին: Պատվիրակության կազմում էին նաև միջազգային համագործակցության բաժնի պետ Քրիստինա Ծատուրյանը և ռուսաց լեզվի ամբիոնի դասախոս Արմեն Հակոբյանը:

Այցը հագեցած էր մի շարք հանդիպումներով, մասնավորապես նոյեմբերի 2-ին ՄՄՊՀ-ի ռեկտոր Ալեքսեյ Լուբկովի հետ հանդիպման ընթացքում քննարկվեց «Ամառային դպրոց» միջազգային ծրագրին բուհի ուսանողների մասնակցության, պրակտիկայի շրջանակներում նրանց փոխանակման, երկակի դիպլոմների շնորհման վերաբերյալ և այլ հարցեր:

Ռեկտոր Ալեքսեյ Լուբկովն իր պատրաստակամությունը հայտնեց աջակցելու համատեղ բոլոր նախաձեռնություններին:

Հաջորդ հանդիպումը Ռուսաստանի Ա. Ս. Պուշկինի անվան ռուսաց լեզվի ինստիտուտի ռեկտոր Մարգարիտա Ռուսեցկայայի և գիտական խորհրդի անդամների հետ էր:

➤2

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

➢1 Գիտական խորհրդի որոշմամբ էլ ՀՊՄՀ-ի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանին շնորհվեց Ա. Ս. Պուշկինի անվան ռուսաց լեզվի ինստիտուտի պատվավոր պրոֆեսորի կոչում:

«Շատ հաճելի է, որ ՀՊՄՀ-ն՝ ի թիվս այլ ռազմավարական ուղղությունների, կարևորություն է տալիս ռուսաց լեզվի դասավանդման որակի բարձրացմանը: Մանկավարժական համալսարանները մեր կարևորագույն գործընկերներից են. հենց այդ կրթական հաստատությունների շնորհիվ է, որ ռուսաց լեզուն ներթափանցում է դպրոց»,-ասաց Մարգարիտա Ռուսեցկայան:

Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանն էլ իր շնորհակալական խոսքում ընդգծեց, որ Ա. Ս. Պուշկինի անվան ռուսաց լեզվի ինստիտուտը Ռուսաստանի Դաշնության լավագույն հումանիտար բուհերից մեկն է՝ հավելելով. «Այն նաև ռուսերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման առաջատարներից է. այդ տեսանկյունից կառույցը մեծ դեր կարող է ունենալ միջպետական համագործակցության հարցերում»:

«Լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխություն

հի Լիլիթ Ղալեչյանը դարձավ բուհի «Տարվա լավագույն ուսանող»-ը:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ ԱԺ պատգամավոր, ՀԵՀ հոգաբարձուների խորհրդի համակարգող Կարեն Ավագյանը, ՀՊՄՀ-ի դասախոսներ և ուսանողներ:

Բուհի տասը ֆակուլտետներից նախապես ընտրվել էին լավագույն ուսանողները, որոնք պարգևատրվեցին տոնական ցերեկույթի ընթացքում, իսկ Մանկավարժական համալսարանի 2017 թվականի լավագույն ուսանողը կմեկնի Մոնտենեգրո:

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Լավագույն ուսանող» մրցանակաբաշխությունը կազմակերպել էին Հայաստանի երիտասարդական հիմնադրամը և բուհի ուսանողական խորհուրդը:

ՀԵՀ հոգաբարձուների խորհրդի համակարգող, ՀՀ ԱԺ պատգամավոր Կարեն Ավագյանը շնորհավորեց ուսանողներին ուսանողության համաշխարհային օրվա առիթով և նշեց. «Երիտասարդությունից պահանջը եղել և մնում է նույնը՝ թարմություն, նոր գաղափարներ, նոր դեմքեր, և այդ ամենը խարսխված հայրենասիրությամբ ու պետականաշինությամբ: Ամեն տեղ էլ լավագույններ լինում են. լավագույններ պետք է լինեն նաև ուսանողության մեջ: Այդ մարդիկ նրանք են, որոնք մի փոքր ավելի շատ ջանք են թափում, մի քիչ ավելի նպատակասլաց են, և արդյունքները շոշափելի են՝ այսօր լավագույնն են բուհում, վաղը լավագույնը կլինեն աշխատավայրում և այդպես շարունակ, մինչև մեր հանրապետությունը կներկայացնեն տարբեր հարթակներում»:

Բուհի լավագույն ուսանող Լիլիթ Ղալեչյանն էլ շնորհակալություն հայտնեց անաչառ վերաբերմունքի համար և նաև այն մարդկանց, որոնք աջակցել են իրեն: Հավելենք, որ տոնական միջոցառումն այս անգամ խորհրդանշական էր, քանզի բուհը նշում է իր 95-ամյակը:

Տոնական ցերեկույթն ուղեկցվեց հայկական էստրադայի ներկայացուցիչների ելույթներով: Արսեն Սաֆարյանը, Սոֆի Մխեյանը, Լեյլա Սարիբեկյանը, Արսեն Գրիգորյանը (Մրո), Սևակ Խանաղյանը, Սոնա Շահգելդյանն իրենց կատարումներով շնորհավորեցին երիտասարդներին և օրը առավել տոնական դարձրին:

ԻՄ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆԸ

Ռազմիկ ԴԱՎՈՅԱՆ.

Բանաստեղծ, ՀՊՄՀ 1964 թ. շրջանավարտ

...ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՀԵՔԻԱԹ ԴԱՐՁԱՎ ԻՆՁ ՀԱՄԱՐ

Հիմա հետադարձ հայաքով նայում եմ ու հասկանում, որ Մանկավարժական ինստիտուտում սովորելու տարիները կյանքիս լավագույն շրջաններից մեկն է եղել: Այն ժամանակ Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտը հնգամյա ուսուցմամբ էր: Ես ընդունվեցի Պատմալեզվագրական ֆակուլտետիը, որը տալիս էր երեք մասնագիտություն: Այստեղ ուսանելու համար ես պարտական եմ հրաշալի լեզվաբան Վաղարշակ Քոսյանին:

...Նոր էի ավարտել Լենինականի բժշկական ուսումնարանը, փաստաթղթերի փաթեթը թևիս տակ, նստեցի բանվորական գնացք՝ էլեկտրիչկա, և 6 ժամում Լենինականից հասա Երևան՝ գործերս հանձնելու Երևանի պետական համալսարան: Մայրս 13 զավակ է ունեցել, ես 13-րդն էի, և նրանցից միայն ես բարձրագույն կրթություն ստացա, մյուսները գնացին իրենց ճանապարհով... Դեռ էն գլխից երևում էր, որ ես բանաստեղծական հակումներ ունեմ... Ու քանի որ առավոտյան ժամը 6-ն էր, համալսարանի դռները փակ էին, ես Աբովյանով իջա հրապարակի ցայտաղբյուրների մոտ: Դիմացս մի մարդ դուրս եկավ, ով ճանաչեց ինձ և հարցրեց. «Դու Դավոյենց Լուսիկի տղա՞ն ես...»: Այդ մարդը Վաղարշակ Քոսյանն էր. նա ծնունդով Սպիտակի Մեծ Պարնի գյուղից էր. մենք համագյուղացիներ էինք: Երբ իմացավ, որ ուզում եմ ընդունվել Երևանի պետական համալասարան, ասաց. «Ի՜նչ համալսարան, մեր ազգային գիտության ամբողջ հրաշալի կազմը Մանկավարժականում է, գործերդ



կբերես Մանկավարժական...Դու պետք է վստահես ինձ և գործերդ բերես Մանկավարժական... »:

Դա 1958 թվականին էր: Քննությունները հանձնեցի, բայց այնպես ստացեց, որ ես և մի տղա ՝ Կառլեն Հակոբյան անունով, ով բանաստեղծություններ էր գրում, հայտնվեցինք պայմանական ընդունելության տակ: Մենք՝ դիմորդներս, այդ ընթացքում Թոխմախ գյուլի մոտ գտնվող հանրակացարանում էինք ապրում, փայտոջիլների ընկերակցությամբ, և արդեն որոշ չափով ծանոթացել էինք մեկմեկու: Մեզնից մեկը պիտի ընդունվեր, իսկ այդ տղան արդեն երրորդ տարին էր՝ դուրս էր մնում ընդունելությունից: Բացի այդ, նրա համար նամակ-երաշխավորագիր էր գրել Ավետիք Իսահակյանը: Ես որոշեցի այդ տեղը թողնել Կառլենին և հաջորդ տարի նորից մասնակցել ընդունելության քննություններին: Վերադարձա Լենինական և երեք խոշոր գործարաններում աշխատեցի որպես սանիտարական հսկիչ:

Հաջորդ տարի ես բարձր նիշերով հանձնեցի քննությունները և ընդունվեցի Մանկավարժական ինստիտուտի Պատմալեզվագրական ֆակուլտետ:

Այսօրվա պես հիշում եմ ՝ Զավեն Գրիգորյան կար, պատմաբան, հետագայում՝ կենտկոմի քարտուղար, նրա մասին ասում էին, որ դաժան մարդ է և ազգասեր չի... արևմտահայերենը նա համարել էր հայոց լեզվի բարբառ...Նա պատմության քննության հանձնաժողովի նախագահն էր: Պատմություն առարկայի քննությանը ես նստած բանաստեղծություն էի գրում, փոխանակ պատմության հարցերի վերաբերյալ նշումներ անեի, և Զավեն Գրիգորյանը նկատել էր... Նա մոտեցավ ինձ, գրածս վերցրեց ու գնաց: Երբ պատասխանելու իմ հերթը հասավ, նա բարձրաձայն կարդաց գրածս բանաստեղծությունը և ասաց՝ ապրես, գերազանց:

Եվ այսպես, 1959 թվականին ես ընդունվեցի բուհ և Մանկավարժական ինստիտուտը հեքիաթ դարձավ ինձ համար: Տիտաններ էին բոլոր նրանք, ովքեր մեզ դասախոսում էին: Մեր կուրսում 52 հոգի էինք, բոլորը գրում էին դասախոսությունները, ես չէի գրում, միայն լսում էի...

Ակադեմիկոս Մորուս Հասրաթյան. գագաթ էր մի քանի մասնագիտությունների գծով՝ բնագիտություն, պատմություն, բանասիրություն...Առաքել Առաքելյան՝ հայոց մշակույթի պատմություն, Վարդգես Համազասպյան, հայ ժողովրդի պատմության, հայ գրականության մասնագետներ՝ Արշալույս Բաբայան, Վաչե Պարտիզունի, Եղիշե Պետրոսյան, պատմություն՝ Արտաշես Պողոսյան, օտար լեզուներ՝ Ռաֆայել Տարոնացի, ֆրանսագետ, 10 տարի ապրել էր Փարիզում, ռուսաց լեզու՝ Սուսաննա Պետրովնա, լեզվաբաններ՝ Աշոտ Աբրահամյան, ով ոսկեդարյան ձեռագրերը անգիր գիտեր, Աճառյանի անձնական գրադարանում էր սովորել, նրա մոտ կրթություն ստացել, Վաղարշակ Քոսյան, Արարատ Ղարիբյան, Էդվարդ Աղայան, հայ հին գրականության մասնագետ Աշոտ Մկրտչյան, Պետրոս Բեդիրյան... Անհերևակայելի էր նրանց լսել, նրանք իմաստության շտեմարաններ էին: Մի խոսքով ամբողջ կրթական դաշտը լցված էր տիտաններով... Հրաշալի տարիներ էին:

Պարույր Սևակը գրել էր «Անլռելի զանգաակատուն» պոեմը և եկել էր մանկավարժականի ուսանողների հետ հանդիպման: 1959 թվականին էր, ես առաջին կուրսի ուսանող էի, և ինձ ասել էին, որ պոեմի մասին խոսեմ... Սևակը տպավորվել էր իմ ելույթից: Հետագայում, երբ Վիգեն Խեչումյանի մոտ տեսել էր իմ ձեռագրերը, որ հրատարակության էր պատրաստվում, կարդացել էր և ասել՝ այս գիրքը ես պետք է խմբագրեմ: Դա իմ առաջին՝ «Իմ աշխարհը» գիրքն էր...

Հրանտ Մաթևոսյանն ինձնից հինգ տարով մեծ էր, թեև մեկ տարվա տարբերությամբ ավարտեցինք: 40 տարի ընկերություն արինք: Շատ ջերմ ընկերություն էր, և մենք հպարտանում էինք դրա համար...

Մեր կուրսը իսկապես շատ լավն էր, շատերը հետագայում զբաղվեցին գիտությամբ, աղջիկների մեծ մասն էլ մանկավարժական գործունեություն ծավալեց:

Ուսանողությունն էլ եղել է, կա ու կլինի ուսմանը մատների արանքով նայող կամ ուսման իսկական հարգը իմացող երիտասարդների մի զանգված...

Ցուցահանդես՝ համալսարանի 95-ամյակին

Մանկավարժական համալսարանի 95-ամյակի առթիվ ռեկտորատի մասնաշենքի երկրորդ հարկի սրահում բացվեց բուհի աշխատողների ստեղծագործությունների ցուցահանդեսը: Թանգարանի նախաձեռնությամբ բացված ցուցահանդեսը բազմաբնույթ աշխատանքների հետաքրքիր ցուցադրություն էր, ուր արդեն հայտնի ու ճանաչված ստեղծագործողների կողքին ներկայացվել էին նաև նոր անուններ: Գեղանկարչական ու լուսանկարչական ստեղծագործությունների շարքը լրացնում էին գոբելեն, բատիկա, կիրառական ու դեկորատիվ ոճի տարբեր աշխատանքներ:

ՀՊՄՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը ներկաներին շնորհավորեց տոնական օրվա առթիվ և արժևորեց ցուցահանդեսը՝ որպես գեղարվեստական ճաշակի դրսևորման ու դաստիարակման ուրույն ձև: Նա բուհի 95-ամյա տարեգրության մեջ կարևորեց նաև համալսարանր թանգարանի 5-ամյակը, իսկ բուհի աշխատակիցներին մաղթեց ստեղծագործական նոր վերելքներ:

Ցուցահանդեսի բացման առթիվ ելույթ ունեցավ նաև համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտեթի դեկան, արվեստագիտության դոկտոր Արա Հակոբյանը. «Ուրախ եմ, որ համալսարանի այս տարածքը դարձել է մարդու գեղագիտական ճաշակը բարձրացնելու ուրույն հարթակ: Հուսով եմ, որ այն կլինի շարունակական»:

Թանգարանի տնօրեն Ալվարդ Գրիգորյանը հպարտ է, որ համալսարանում կա Գեղարվեստական կրթության ֆակուլտետ, որը ճաշակ է ձևավորում և նպաստում նման ցուցադրությունների կազմակերպմանը:

Պրոռեկտորը ցուցահանդեսը բաց դաս համարեց, քանի որ 95 տարի առաջ այս օրը հնչեց Մանկավարժականի մուտքն ազդարարող առաջին զանգը, և հորդորեց հարցեր ուղղել ստեղծագործությունների հեղինակներին:

Մանկավարժական գիտությունների դոկտոր, ամբիոնի վարիչ Անուշ Եղիազարյանը ներկայացրեց դիզայնի և դեկորատիվ-կիրառական արվեստի ամբիոնի աշխատանքները: Ներկայացված էին փայտի գեղարվեստական փորագրություն, խեցեգործական, դիզայներական եռապատկեր, բատիկա, գոբելենային աշխատանքներ: Ա. Եղիազարյանի հեղինակային «Անհատնում շղթա» կոչվող գոբելեն աշխատանքն արված էր նորարական բարդ տեխնիկայով, ծավալային նոր մեկնաբանությամբ:

«Թեև ավարտել եմ Գեղարվեստի ակադեմիան, աշխատանքային կենսագրությունս կապված է Մանկավարժական համալսարանի հետ: Համալսարանը իմ կյանքն է, կյանքիս լավագույն տարիները կապված են այս բուհի հետ, առանց որի չեմ պատկերացնում իմ գործունեությունը»,-ասաց Ա. Եղիազարյանը:

Մանկավարժական համալսարանի դասախոս, Հայաստանի դիզայներների միության անդամ Գայանե Եղիազարյանի «Զրահարս» բատիկ աշխատանքը հեղինակի մեկնաբանությամբ բազմաշերտ ասելիք ունի: Այն ծովից ծով Հայաստանն է՝ հայ կնոջ կերպարով, նրա ներքին և արտաքին ներդաշնակությամբ ու հմայքով:

Տոնական օրվա տպավորություններն ամբողջացնող Լեմս Ներսիսյանի, Նիկոլ Աղաբաբյանի, Ֆայենբերգ Սարգսյանի, Ժաննա Խաչատրյանի, ուսանող Հայկ Մանուկյանի և մյուս ստեղծագործողների աշխատանքները երկար կմնան ներկաների հիշողության մեջ:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ԻՄ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆԸ

ՆՐԱՆՔ ՈՒՂԵԿՑՈՒՄ ԵՆ ԻՆՁ ԻՐԵՆՑ ԻՄԱՍՏՈՒԹՅԱՄԲ

ՋՈՒԼԻԵՏԱ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

Մանկավարժական գիտությունների դոկտոր, Ա. Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման ամբիոնի վարիչ, 1968-1969 ուստարվա շրջանավարտ, Մանկավարժական ինստիտուտի առաջին Լենինյան թոշակառու

Հարազատ համալսարանի գրեթե մեկդարյա պատմության յուրաքանչյուր էջի հետ կապված են ավելի քան հիսունամյա իմ հիշողությունները: Դրանք ինձ համար բարձրարժեք են՝ հաճախ հիշարժան, երբեմն խոտորումներով ու դժվարին, հաղթանակներով ու ձեռքբերումներով առատ:

Մանկավարժական ինստիտուտի կամարների ներքո են ձևավորվել իմ մասնագիտական կոմպետենցիաները, անձնային որակներն ու արժեհամակարգի բոլո՜ր-բոլո՜ր բաղադրիչները: Պիտի խոստովանեմ, որ այս հիսունամյա ճանապարհին մշտապես ունեցել եմ մասնագիտական կայուն համոզմունքներ, մանկավարժական աներեր սկզբունքներ, որոնց հավատարիմ եմ մինչև այսօր:

Այդ ուղին ես անցել եմ այն հրաշալի մանկավարժական կոլեկտիվի հետ, որի հետ կատարել եմ իմ առաջին քայլերն ու երախտագիտությամբ եմ հիշում այսօր: Ես խոնարհվում եմ նրանց հիշատակի առջև, նրանք անուն առ անուն ինձ հետ են իրենց իմաստությամբ, նրանց մասնագիտական և մարդկային արժեքներն առ այսօր ուղեկցում են ինձ:

Իմ ուսանողական տարիներն անցել են բուռն ու ստեղծագործական ծանրաբեռնվածությամբ, աշխույժ գիտական պրպտումներով: Եղել են նաև զավեշտով, հումորով լի պահեր, որոնք ես հիշում եմ առ այսօր ու դարձյալ բարձր գնահատում իմ համալսարանն ու նրա վաստակաշատ կոլեկտիվին:

Իմ դասախոսները՝ ազնիվ ու պահանջկոտ Անժել Քյուրքչյանը, հմայիչ Ավագ Խաչատրյանը, բծախնդիր ու ջանասեր Աշոտ Տեր-Գրիգորյանը, խստապահանջ ու հումորով Կառլեն Միրզախանյանը, արվեստի երկրպագու Ռուբեն Զարյանը, ուսանողակենտրոն ու կանացի Գոհար Երիցյանը, քայլող հանրագիտարաններ Արշալույս Բաբայանն ու Աշոտ Աբրահամյանը, բարեհամբույր ու մշտաժպիտ Տելեմակ Վարդումյանը…և էլի շատերը իմ հիշողության պայծառ ու լուսավոր էջերն են:

Ընդարձակ է այս շարքը՝ ազնիվ նվիրյալներ, որոնք անմնացորդ ու բացառիկ պատասխանատվությամբ էին աշխատում մեզ հետ, եզակի ու անկրկնելի մեծություններ, որոնց համար ուսանողը բարձրարժեք էր: Խոնարհվում եմ նրանց հիշատակի առջև:

Շնորհակալություն իմ համալսարանին, այսօրվա իմ գործընկերներին, որոնք շարունակում են մեր օջախի կենսագրությունը:

ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՄԵԿՆԱՐԿԸ

Հոկտեմբերի 30-ին տեղի ունեցավ ՀՀ և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին նվիրված մանկավարժական համահամալսարանական օլիմպիադայի 1-ին փուլը, որին մասնակցում էին տարբեր ֆակուլտետներից շուրջ 60 ուսանողներ:

Օլիմպադան նախաձեռնել էին ՀՊՄՀ-ի մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնը և ՀՊՄՀ-ի մանկության հիմնախնդիրները ուսումնասիրող լաբորատորիան, իսկ կազմակերպիչներն էին Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Գայանե Աղուզումցյանը և ասիստենտ, մ.գ.թ. Նաիրա Մարտիրոսյանը:

Օլիմպիադայի նպատակն էր՝ նպաստել բակալավրիատի ուսանողների և մագիստրոսների մանկավարժական գիտելիքների ամրապնդմանը, մանկավարժական պրակտիկ գործունեություն ծավալելու կարողությունների և հմտությունների ձեռք բերմանն ու խորացմանը, մանկավարժական մտածելակերպի ձևավորմանը:

Օլիմպադայի 1-ին փուլում մասնակիցներին տրվեց 20 հարցից բաղկացած թեստ: 80 միավոր հավաքած մասնակիցները կանցնեն հաջորդ փուլ:

Բակալավրիատի ուսանողների համար թեստի հարցերն ու առաջադրանքներն ընդգրկում են մանկավարժության հետևյալ բնագավառները. տեսական մանկավարժություն, գործնական մանկավարժություն, կրթության և մանկավարժական մտքի պատմություն, արտադասարանական-արտադպրոցական դաստիարակություն, առողջ ապրելակերպ, ընտանեկան դաստիարակություն, հատուկ, նախադպրոցական կրթություն:

Օլիմպիադայի 2-րդ փուլում մասնակիցները կլուծեն մանկավարժական տարբեր իրավիճակներ և կտան իրավիճակի լուծման առնվազն երեք տարբերակ, իսկ 3-րդ փուլում մասնակիցներին կտրվի առաջադրանք՝ առանձնացնել մանկավարժության արդի որևէ հիմնախնդիր, հիմնավորել այդ հիմնախնդրի արդիականությունը և հիմնախնդրի լուծման առաջարկով դիմել ՀՀ ԿԳՆ նախարարին:

Օլիմպիադայի աշխատանքները կամփոփվեն դեկտեմբերի վերջին, իսկ լավագույն մասնակիցները կխրախուսվեն:

Հովհաննես ՊԱՊԻԿՅԱՆ
Գրող, հրապարակախոս 1969թ. շրջանավարտ

ՁԵՐ ՁԱՅՆԸ ՀԱՎԵՐԺ ԼՍԵԼԻ

Մտաբերումներ Մանկավարժական համալսարանի շենքի մոտ

Ծննդատան կողքով անցնելիս, մարդը երբեւէ նայո՞ւմ է նրա պատուհաններին, որտեղ իր առաջին ճիչն է արտաբերել՝ որպես այս աշխարհին ասվող իր ողջույնն ու բարի մուտքը: Կարծում եմ նայում է, եթե դա ա՛յն ծննդատունն է, որտեղ ինքն է ծնվել:

Ես այդ զգացողությունն եմ ապրում Մանկավարժական համալսարանի շենքի մոտ, որտեղ ինձ ինքնուրույն կյանքի ուղի ցույց տվեցին իմ սիրելի դասախոսները:

Այստեղ իմ դասախոսներն էին ու են, ովքեր մտով ու հոգով լուսավոր այրեր էին ու են, ովքեր դիմորդի՝ եւ հետո նաեւ ուսանողի մեջ տեսնում էին անցյալը, ներկան ու ապառնին, հասկանո՛ւմ էին ժամանակի պահանջի պատմական արժեքը, եւ նրանց վարմունքը շեշտող էր, հոգեզմայլ, ջերմ ու սրտալի:

Ահավասիկ, Պետրոս Բեդիրյանը, ով Կիպրոսի Մելքոնյան հայտնի վարժարանի սան է եղել, եւ այսօր էլ նրա գրքերի շնորհիվ Մանկավարժական համալսարանում շարունակում է հնչել հայոց ոսկեղենիկ մայրենին: Նրա մասին իմ առաջին ակնարկը գրեցի, երբ առաջին կուրսի ուսանող էի: Անբացատրելի են մարդկային որակները, որոնցով մեկը կարող է չափազանց շռայլորեն օժտված լինել, երբ ընդունելության քննության գրավոր ազատ թեմա շարադրությունը ստուգելիս ո՛չ թե միայն տառասխալներն է նայում ու չի շտապում դրան համապատասխան թվանշան նշանակել, այլեւ դիմորդի գրածի բովանդակությա՛ն մեջ է խորանում ու թե այնտեղ խոր իմաստ է գտնում, ուրեմն այդ դիմորդի մեջ տեսնում է ապագա լավագույն ուսուցչին, նաեւ ապագա լրագրողին: Մարդկային այդ որակների տե՛րն է, որ կարող է տառասխալների մեջ տեսնել Ախալցխայի գյուղերից եկած այն պատանուն, ով բարբառի՛ ազդեցության տակ է իր գեղեցիկ շարադրանքում տառասխալներ թողել: Ասել է՝ դրանք ուսանելու ընթացքում արագ վերացման ենթակա են, եւ ազատ թեմայի շարադրանքն ինքնին մի հիմնավոր այցեքարտ է՝ նրան ԲՈՒՀ-ի դռներից ներս թողնելու: Եվ Բեդիրյանն այդ անծանոթ պատանու համար երկար վեճ ունեցավ դեկանատում ու… հաղթեց: Այդ դիմորդը ես էի:

Իմ դասախոսներն ինձ համար եղան առաջին դպիրներն ու դպրապետերն իմ ո՛չ միայն գրավոր խոսքի, այլեւ տվյա՛լ ժամանակի ու անցնելիք ճանապարհին իմ մեջ մտավորականի՛ն ձեւավորեցին: Նրանք ինձ համար եղան մշտապես ուղենշող-օրինակելի: Նաեւ «անցնելիք ճանապարհ» ասացի, որովհետեւ, եթե հիմա լրագրության մեջ ինձանից ինչ-որ բան եմ ներկայացնում, դա իմ հոգու մեջ նրա՛նց թողած Ոգու հերկն է, հուռթի՛, բերքաբե՛ր:

Խոնարհումս ձեզ, սիրելի դասախոսներ, պարտք եմ ձեզ, որ ձեզանից յուրացրած գրելու իմ շնորհներով դեռ չեմ հասցրել լրջագույնս ներկայացնել ձեզ: Մանավանդ մեր հատուկ կուրսի դասախոս երանելի Արշալույս Բաբայանին, ով Բակունցին այնպե՛ս էր ներկայացնում, որ հետո, արդեն լրագրողս, երբ Մթնաձորի մասին ակնարկ էի գրում, այդ թավուտ անտառներում ո՛չ միայն բակունցյան հետքեր էի որոնում, այլեւ փորձում էի սիրելի Բաբայանի նկարագրած Պանինին գտնել: Այնտեղ ես Բաբայանի ձա՛յնն էի լսում. «Պանիին մի փնտրիր, դու կրկին դարձիր Բակունցի գրքերին, եւ կգտնես Անտառի Աստված Պանին, ու կիմանաս, թե ինչու է Բակունցի հերոսը Պանին կոչվում»:

Կարլեն Միրզախանյանն է մտորումներիս մեջ, ով պատմության հրաշալի դասավանդումից զատ, մանկավարժականում կուլտուրայի ֆակուլտե՛տ ստեղծեց, ուր կինոյի եւ մշակույթի հրաշալի դասախոսներ հրավիրեց՝ որպես անգնահատելի նվեր ուսանողներին, եւ արդյունքում մինչեւ հիմա մենք վայելում ենք այդ ֆակուլտետի շրջանավարտների հյուսած գորգի գեղեցկությունը, որ կոչվում է Մալյանի անվան կինոդերասանի թատրոն-ստուդիա:

Իմ ունկերում Ռուբեն Զարյանի մեղմ ձայնն է՝ արվեստի երեւելիներին բաց ափի պարզությամբ ներկայացնող: Տելեմակ Վարդումյանն ու Սեդա Միրզոյանն են, Անժելա Քյուրքչյանն ու Գոհար Երիցյանը, Ավագ Խաչատրյանն ու Աշոտ Մարությանը…

Ավարտելուց հետո երբ մանկավարժականի «Մանկավարժ» թերթի պատասխանատու քարտուղարն էի, ԲՈՒՀ-ն ինձ համար կանաչ լույս վառեց դեպի լրագրության հետաքրքիր աշխարհ տանող ճանապարհին: Այդ ճանապարհի ամեն հատվածում, ամեն խաչմերուկում, հեքիաթի այն բարի ծերունու նման, ինձ շարունակում են խրատել իմ դասախոսները, ում ես երբեւէ նախկին չեմ կարող ասել-նրանք մշտահմա իմ կողքին են, ու ես՝ շարունակում եմ նրանց սանը մնալ:

Օրհնյալ լինեք դուք՝ վաստակի ծիրանին այնքա՜ն սազական է ձեր ուսերին:

ԻՄ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆԸ

Հասմիկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Երևանի «Ավետիք Իսահակյանի անվան Կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ի տնօրեն, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, ՀՊՄՀ 1983 թվականի շրջանավարտ

ԱՊԱԳԱՅԻ ՏԵՍԼԱԿԱՆՈՎ

Այսօր արդեն պատկառելի տարիքի հասած մեր սիրելի մանկավարժականը բուռն օրեր է ապրում՝ նշելով իր 95-ամյա տարեդարձը: Չկա մի հայ մարդ, որն իր կյանքում գոնե մեկ անգամ որևէ առիթով առնչված չլինի այս հաստատության հետ...

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանն իր գործունեության մոտ մեկդարյա պատմությամբ կրթել, դաստիարակել և կյանք է ճանապարհել բազում սերունդների, որոնք իրենց մանկավարժական ու մշակութային գործունեությամբ նոր խոսք են ասել գիտության տարբեր բնագավառների, ինչպես նաև մանկավարժության բազմաշերտ աշխարհում: Նրանք իրենց հուսալի ուսերին վերցրել ու տանում են ապագայի իրենց տեսլականը, այն կյանքի կոչելու դժվարին, բայց պատասխանատու աշխատանքը: Իր շրջադարձային իրադարձություններով հարուստ պատմության քառուղիներում Խ. Աբովյանի անվան կրթօջախում համալսարանական մկրտություն են ստացել բազմաթիվ ականավոր գիտական ու հասարակական գործիչներ, բազմափորձ ու նվիրյալ մանկավարժներ, մշակույթի հայտնի դեմքեր, նշանավոր երևելի այլ անձինք...

Սակայն այս ամենը չէր լինի, եթե գիտակրթական կարևոր այս գործը չգլխավորեին ու առաջ չտանեին իրենց կոչմանը հավատարիմ, իրենց ամենօրյա աշխատանքն արժևորող և այն իրագործող, գիտակ ու հմուտ մանկավարժները, պրոֆեսորադասախոսական ողջ անձնակազմը, որոնց շնորհիվ էլ մեր սիրելի մանկավարժականը համարվում է հանրապետության լավագույն բուհերից մեկը:

Ինչպես Հայաստանի բոլոր դպրոցները, մանկապարտեզները, կրթական, գիտական և մշակութային շատ հիմնարկներն ու հաստատությունները, այնպես էլ Երևանի Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանը մշտապես վայելել է Խ. Աբովյանի բարձր անունը կրող հայկական պետական մանկավարժական համալսարանի հետ բարեկամության արգասաբեր պտուղները, նրա կողմից պատրաստած և գրադարան ճանապարհած գիտակ ու խելացի մասնագետների հետ աշխատելու հաճույքը:

Ամեն տարի գրադարանում գործնական աշխատանքի փորձ են անցնում Խ.Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի գրադարանային բաժնի ուսանողները: Նրանք դուրս չեն մնում բուհի երբեմնի շրջանավարտ փորձառու գրադարանավարների ուշադրությունից, իսկ նրանցից շատերին հնարավորություն է տրվում աշխատելու մեր գրադարանում, որտեղ աշխատանքն ունի նաև մանկավարժական բնույթ. մենք շարունակում ենք կրթական գործընթացը… Մեզ համար մեծ պատիվ է շարունակել ձեր անգնահատելի գործը՝ կյանքի կոչելով այն գիտելիքներն ու փորձը, որ բուհն անընդմեջ ու ջանասիրաբար փոխանցում է իր սաներին՝ Հայաստանի ապագան կերտողներին.... Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ «Ավ. Իսահակյանի անվան Կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ի 134 գրադարանային աշխատակիցներից 56-ը աբովյանցիներ են, մեր հարազատ բուհի շրջանավարտներ:

Ուստի, թույլ տվեք բոլոր իսահակյանցիների անունից, մեծագույն երախտագիտությամբ ու ջերմորեն, շնորհավորել մեզ կրթած, դաստիարակած, աշխատանքի ու կյանքի դժվարություններին դիմակայելու համար թրծած մեր սիրելի ու հարազատ բուհի ծննդյան 95-ամյա հոբելյանը: Մաղթում եմ նորանոր աշխատանքային, գիտական, մշակութային բարձունքների նվաճում, հետագա բազում հաջողություններ...

ՊԵՏՔ Է ՄԻՇՏ ԳՆԱԼ ԵՐԱԶԱՆՔՆԵՐԻ ՀԵՏԵՎԻՑ

- Լիլիթ, ինչպե՞ս որոշեցիր ընտրել մանկավարժի մասնագիտությունը:

- Մանկավարժությունը գեներով է փոխանցվել ինձ, մայրս ևս մանկավարժ է: Դեռ մանկուց սեր ունեի մանկավարժության հանդեպ, միշտ ցանկացել եմ դառնալ մանկավարժ, և երբ եկավ որոշում կայացնելու ժամանակը, ես ընտրեցի այդ մասնագիտությունը:

- Ի՞նչ է քեզ համար համալսարանի լավագույն ուսանող լինելը:

- Դա նախ և առաջ շատ մեծ պատասխանատվություն է: Սակայն, կարծում եմ, որ իմ հարազատ բուհի կողմից գնահատվեց այս տարիներին իմ կատարած աշխատանքն ու ջանքերը: Շատ հաճելի էր դառնալ լավագույն ուսանող: Լավագույն լինելը առավել պարտավորեցնում է, քանզի դու ներկայացնում ես համալսարանի ուսանողությանը: Վստահ եմ, որ ավելի մեծ ջանք ու եռանդ կներդնեմ նոր բարձունքների հասնելու համար:

- Ի՞նչ ես կարծում՝ մյուս 9 մրցակիցներն արժանի՞ չէին լավագույնի կոչմանը:

- Իհարկե, ներկայացված բոլոր ուսանողներն էլ արժանի էին կրելու ՀՊՄՀ -ի լավագույն ուսանող տիտղոսը: Բայց միգուցե ես մի փոքր առավել էի աչքի ընկել իմ գործունեությամբ, և այդպես որոշեց համալսարանի ուսանողական խորհուրդը:

- Ի՞նչ հասարակական գործունեությամբ ես զբաղվում:

- Ուսանողական տարիներից սկսած միշտ ակտիվորեն մասնակցել և շարունակում եմ մասնակցել հասարակական տարբեր ձեռնարկների իրականացմանը: Ուսանողական խորհրդի և համալսարանի գիտական խորհրդի անդամ եմ, մասնակցել եմ բուհի «Ամառային դպրոց» ծրագրին: Իմ ուժերն եմ փորձում նաև գիտական ոլորտում. այժմ աշխատում եմ Օրգանական քիմիայի ինստիտուտում՝ որպես գիտաշխատող: Գիտահետազոտական աշխատանքներով եմ զբաղվում և շատ եմ սիրում իմ մասնագիտությունը:

- Ո՞րն է հաջողության քո բանաձևը:

- Եթե խոսենք այս մրցույթից ապա այստեղ իմ հաջողությունը կախված էր սահմանված չափանիշներին համապատասխանելուց՝ հասարակական, գիտական ոլորտում ակտիվություն, բարձր առաջադիմություն, լեզուների իմացություն և այլն: Իսկ առհասարակ կյանքում հաջողության հասնելու գրավականը ամենակարևոր մարդկային գծերն ու անձնային որակները պահելն է, քանզի մրցույթները և նմանատիպ ձեռնարկները անցողիկ են և մնայուն արժեք չեն, իսկ մարդկային բարձր որակներն ու արժանիքները մնայուն են և հաջողության հասնելու համար անհրաժեշտ են ողջ կյանքի ընթացքում:

- Ի՞նչ պետք է անել յուրաքանչյուր ոլորտում լավագույնը լինելու համար:

- Պետք է միշտ գնալ երազանքների հետևից, լինել նպատակասլաց և նպատակին հասնելու համար քայլեր իրականացնել համբերատար, առանց շտապելու: Նպատակիդ հասնելու համար կարևոր է նաև կատարած աշխատանքիդ գնահատումը. այդ դեպքում ավելի ես ոգևորվում ու մոտիվացվում: Ես ամեն ոլորտում փորձում եմ լինել լավագույնը:

- Արդյո՞ք բուհից սպասվելիք ակնկալիքներդ արդարացան:

- Հիմա կարող եմ ասել, որ այո՛, ակնկալիքներս արդարացվեցին:

Եթե մի հետին հայացք գցեմ, ապա տարիներ առաջ ուզում էի մասնակցել «Ամառային դպրոց» ծրագրին, մեկնել արտերկիր, լինել «Լավագույն ուսանող»… Կարծես թե տարիների հետ իրականանում են իմ նպատակներն ու ակնկալիքները: Ես այն երջանիկ ուսանողներից եմ, որ ունեմ շատ լավ, բանիմաց դասախոսներ:

Գգտում եմ արժանանալ նաև անվանական կրթաթոշակի:

- Ի՞նչը կփոխեիր բուհում:

- Բուհն այսօր շատ է փոխվել ու զարգացել, իսկ, եթե խոսենք մեր ֆակուլտետի մասին, ապա կցանկանայի, որ դրսում ուսանելու ավելի շատ և երկարաժամկետ հնարավորություններ տրվեին, շատ լինեին մանագիտական վերապատրաստման ծրագրեր, քանզի կարծում եմ, որ այս դարաշրջանում միայն տեղական փորձով լավ մասնագետ դժվար թե կարողանաս դառնալ, արդյունավետ կլիներ ուսանել նաև արտերկրում: Շնորհակալ եմ բուհին և ուսանողական խորհրդին՝ ինձ նման կոչման արժանացնելու համար: Հավելեմ՝ հենց Մանկավարժական համալսարանի շնորհիվ է, որ իմ երազանքների մի մասն արդեն իրականացել են:

- Ունե՞ս կարգախոս, որով առաջնորդվում ես:

- Չգիտեմ որքան կառաջնորդվեմ այս կարգախոսով, սակայն հետևում եմ մայրիկիս խորհրդին՝ միշտ պայքարել, եթե անգամ հույսը նշմարելի չէ, չկոտրվել ու շարունակել պայքարել, քանզի կյանքն ինքնին պայքար է:

Հարցազրույցը՝ Սոնա ԱՐԱՄՅԱՆԻ

Հերթական վարպետաց դասը

Հոկտեմբերի 30-ին Սկզբնական կրթության ֆակուլտետի Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը կազմակերպել էր «Վարպետաց դաս» ուսուցիչ-աշակերտ կոնֆլիկտների առաջացման պատճառների և դրանց հաղթահարման թեմայի շուրջ: Հանդիպման հյուրն էր հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Արմեն Բեջանյանը: Հոգեբանը մանրամասն ներկայացրեց կոնֆլիկտների առաջացման պատճառները և դրանց լուծման գերակա ուղղությունները:

Քննարկմանը մասնակցում էին տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողները, ովքեր մասնակցում են մանկավարժական պրակտիկայի և աշակերտների հետ հարաբերություններում ժամանակ առ ժամանակ ունենում են որոշակի կոնֆլիկտներ: Այդ էր պատճառը, որ թեմայի քննարկմանը նրանք մասնակցեցին հետաքրքրությամբ և ոգևորությամբ: Հանդիպումը գործնական բնույթ կրեց և անցկացվեց հարց-պատասխանի միջոցով:

Ա. Բեջանյանը ապագա մանկավարժներին հորդորեց երեխաների հետ շփման ժամանակ ուշադրություն դարձնել փոխըմբռնմանն ու փոխընկալմանը, որը հնարավորություն կտա առավել արդյունավետ կազմակերպել ուսուցիչ-աշակերտ միջանձնային հարաբերությունները և բարելավել ուսումնական գործընթացը:

«Վարպետաց դասն» ընթացավ բուռն քննարկման մթնոլորտում, ինչն էլ առիթ հանդիսացավ հետագայում ևս նմանատիպ հանդիպումներ կազմակերպելու առաջարկի՝ թեմայի շուրջ առավել ծավալվելու և անպատասխան հարցերը լուսաբանելու համար:

«Ես սիրում եմ այն հարաբերությունները, որտեղ փողն արժեք չունի»,- ասում է Սյուզի Հարությունյանը

Հաշվապահի միջազգային օրվա առթիվ իմ զրուցակիցն է Մանկավարժական համալսարանի գլխավոր հաշվապահ Սյուզի Հարությունյանը:

- Թերթի ընթերցողների համար կգաղտնազերծե՞ք Ձեր մասնագիտության նրբությունները, լավ ու վատ կողմերը...

- Հաշվապահի աշխատանքը, այո, խստապահանջ, պատասխանատու, հետևողականորեն կատարվող աշխատանք է, ես այն միշտ համեմատում եմ զգեստապահարանի հետ, որտեղ յուրաքանչյուր իր ունի իր հստակ տեղը: Իսկ սխալվելու հավանականությունն, իհարկե, չեմ բացառի, քանի որ սխալվում է նա, ով աշխատում է...

- Մարդկային ի՞նչ հատկանիշներով կբնութագրեք Ձեզ, դրանցից որո՞նք են հատկապես օգնում աշխատանքի՞ ճիշտ կազմակերպմանը:

- Ինձ երևի իմ աշխատակիցներն ավելի հստակ կբնութագրեն, այնուամենայնիվ, կարծում եմ աշխատանքների ճիշտ կազմակերպման իմ ելակետը լսելու ունակությունն է:

- Ինչպե՞ս եք Ձեզ զգում թվերի աշխարհում: Դրանք առօրյա կյանքում չե՞ն խանգարում, Ձեզ դարձնում ավելի հաշվենկատ ու խորազնին:

- Թվերի աշխարհում ես ինքնամոռաց եմ լինում, դրանք արտաքնապես են միայն թվեր, իսկ իրականում դրանք ուսանողների ճակատագրեր են, հիմնական միջոցներ, արագամաշ առարկաներ, օգնություններ և այլն... Վստահ կարող եմ ասել որ դրանք կյանքում ինձ չեն խանգարում, քանի որ ի հակադրություն այն կարծիքի, թե հաշապահները հաշվենկատ են, ես սիրում եմ այն հարաբերությունները, որտեղ փողն արժեք չունի:

- Ձեզ և Ձեր ղեկավարած կոլեկտիվին շնորհավորում եմ Հաշվապահի միջազգային օրվա առթիվ՝ մաղթելով կանացի երջանկություն, հաճելի ու գեղեցիկ զգացողություններով լի աշխատանքային տարիներ:

- Շնորհակալություն, ստորաբաժանման աշխատակիցներով կաշխատենք մեր նպաստը բերել 95-ամյա համալսարանի գործունեությանը:

Զրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

- Հե՞շտ է լինել բուհի գլխավոր հաշվապահ և ղեկավարել միայն կանանցից կազմված կոլեկտիվ:

- Գլխավոր հաշվապահի աշխատանքը խիստ պատասխանատու է, այն մանրակրկիտ գործողությունների մի հսկայական շրջանակ է, որի հիմքում ընկած է գործառույթների բծախնդիր հերթականության պահպանումը, հետևողականությունը, մասնագիտության լիարժեք տիրապետումը, հմտությունները, որի արդյունքում միայն հնարավոր է ապահովել աշխատանքի ճշգրտությունը և ժամանակի պահպանումը:

Լինելով բուհի գլխավոր հաշվապահ, ես չեմ կարող խստապահանջ չլինել, քանի որ անգամ փոքր-ինչ կարևորություն չունեցող յուրաքանչյուր թիվ ի վերջո գումար է, հետևաբար գումարների հանդեպ պետք է չափազանց ուշադիր լինել:

Թեպետ հաշվապահության բաժնի աշխատակազմը համալրված է միայն կանանցով, ինձ համար շատ հաճելի և դյուրին է կազմակերպել աշխատանքները նրանց միջավայրում, քանի որ նրանցից յուրաքանչյուրը հստակ գիտի իր անելիքը, սակայն կարծում եմ, որ համերաշխ կոլեկտիվ ունենալու համար կարևոր է աշխատակիցների ոչ թե սեռը, այլ մասնագիտական կարողությունները և փոխըմբռնումը:

- Բոլոր մասնագիտություններն էլ ունեն իրենց դժվարությունները, նրբությունները, հետևաբար միայն աշխատանքային փորձն է, որը տարիների ընթացքում մասնագետին դարձնում է գիտակ՝ այսինքն արագ և հմուտ կոմնորոշվել որևէ հանգուցային իրավիճակում:

- Աշխատանքի ընթացքում հաճա՞խեն լինում բարդ կամ անլուծելի խնդիրներ... Ինչպե՞ս եք գտնում դրանց հանգուցալուծումը:

- Իհարկե, հաճախակի ենք բախվում բարդ, սակայն ոչ անլուծելի խնդիրների, որոնք շատ արագ իրենց լուծումն են ստանում համապատասխան ստորաբաժանումների հետ համագործակցության շնորհիվ, առաջնորդվելով օրենքներով, ստանդարտներով, որոնք հստակ լուծում են պահանջում ոչ թե կամային, այլ օրենքի պահանջով, պարզապես պետք է այդ ամենին տիրապետել՝ սխալներից խուսափելու համար:

- Հաշվապահի մասնագիտությունը խստապահանջություն և ճշգրտություն է պահանջում...Այնուամենայնիվ սխալվելու տեղ կա՞....

ԼՈԳՈՊԵԴԻԱ՝ ԱՍՏՎԱԾԱՀԱՃՈ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբերի 14-ին աշխարհը նշում է Լոգոպեդի միջազգային օրը: Այս առիթով Մանկավարժական համալսարանի Հատուկ կրթության ֆակուլտետը կազմակերպել էր օրվան նվիրված ձեռնարկ՝ ներկայացնելու լոգոպեդական աշխատանքի խնդիրները և ամփոփելու-արժևորելու կատարված աշխատանքը:

Երիցս ճիշտ էր ֆակուլտետի դեկան Սիրանուշ Կարապետյանը, ով ներկաներին Լոգոպեդի միջազգային օրվա առթիվ շնորհավորելով՝ նաև բարձրաձայնեց.«Լոգոպեդի մասնագիտությունը աստվածահաճո և մարդասիրական մասնագիտություն է»:

«Մենք կոչված ենք ապահովելու խոսքի զարգացումն ու վերականգնումը, խոսքը մեծագույն արժեք է, թող բոլորը կարողանան խոսել ու երբևէ չզգացվի մեր մասնագիտության անհրաժեշտությունը»,- անկեղծորեն խոստովանեց դեկանը:

Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Տիգրան Պետրոսյանը լոգոպեդիան համարեց ոչ միայն մանկավարժական ուղղություն, այլև բժշկագիտական դիսցիպլին:

Լոգոպեդիայի երրորդ կուրսի ուսանողները տեսանկարների միջոցով ներկայացրին դասախոս Մերի Շաբոյանի գլխավորությամբ կատարած հետազոտությունը մարդկանց իրազեկվածության, տեղեկացվածության մասին՝ փաստելով, որ լոգոպեդի մասնագիտությունը ներկա ժամանակների ամենամարդասիրական և ամենապահանջված մասնագիտություններից է, մասնագիտություն, որ թույլ է տալիս մշտապես ինքնակրթվել, միաժամանակ զարգացնելով մասնագիտությունը:

Ուսանողները ներկայացրին Երևանում ու մարզերում արված հարցախույզի արդյունքները. ճիշտ է, ինչ-որ տեղ մակերեսային, բայց հասարակության համար երևույթը տեսանելի դարձնող նպատակաուղղվածությամբ:

Լոգոհեքիաթները լայն կիրառություն ունեն ոչ միայն մանկավարժության, այլև լոգոպեդական աշխատանքում: Դրանք կիրառելի են լոգոպեդական աշխատանքի տարբեր փուլերում և տարիքային խմբերում: Ուսանողները ներկայացրին լոգոհեքիաթ՝ ուղղված արտաբերական օրգանների մարզմանը:

Մ. Հերացու անվան բժշկական համալսարանում անցկացված սեմինարքննարկման արդյունքների ներկայացման հիմքում լոգոպեդական աշխատանքի կապի կարևորումն էր բժշկության ոլորտի հետ:

«Սորս» հաշմանդամ երեխաների աջակցության կենտրոնի թիմային աշխատանքի, լոգոպեդի գործունեության ու հաճախ հանդիպող խոսքային խանգարումների մասին խոսեց ՀՊՄՀ շրջանավարտ Լիդա Ջուլիկյանը, ապա Տ. Պետրոսյանը խոսեց խոսքային խանգարումների տարածվածության մասին ամբողջ աշխարհում:

Դասախոս Արմինե Կիրակոսյանը խոսեց լոգոպեդիայի արդի խնդիրներից մեկի՝ գրավոր խոսքի խանգարումների առաջացման պատճառների ու դրանց հաղթահարման զարգացումների մասին՝ ընդգծելով, որ վերջիններս բավականին տարածված են ու խոչընդոտում են գիտելիքների ձեռքբերմանը:

Ռեկտորատի մասնաշենքի երրորդ հարկի սրահում ներկայացված ցուցահանդեսն էլ լոգոպեդի աշխատանքի մեծագույն պատասխանատվության ու նվիրումի դրսևորման արտահայտությունն էր, որ ամբողջացրեց տոնի ասելիքն ու ջերմությունը:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Ցուցահանդես դպրոցականների մասնակցությամբ

Մանկակավարժական համալսարանի Սկզբնական կրթության ֆակուլտետի սրահում նոյեմբերի 8-ին բացված ցուղահանդեսը նվիրված էր համալսարանի հիմնադրման 95-ամյակին: Այն կազմակերպվել էր Սկզբնական կրթության ֆակուլտետի դեկան Հեղինե Խաչատրյանի, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ժաննա Խաչատրյանի նախաձեռնությամբ: «Աշնանային գույների հետքերով» խորագրով ցուցահանդեսում ներկայացվել էր տարբեր դպրոցների 1-12-րդ դասարանների աշակերտների և Սկզբնական կրթության ֆակուլտետի ուսանողների շուրջ 100 աշխատանք. դրանք հիմնականում ջրաներկով և գուաշով արված նկարներ էին:

Սկզբնական կրթության ֆակուլտետի կերպարվեստի դասավանդման մեթոդիկայի առարկայի շրջանակներում կազմակերպված գեղարվեստական տեղծագործությունների ցուցահանդեսին ներկայացված նկարները նախապես ընտրվել էին: Ցուցահանդեսին ներկա էին աշակերտներ, դպրոցների տնօրեններ և ուսուցիչներ, ովքեր ողջունեցին դպրոց-բուհ կապերի սերտացման նման ձևաչափը՝ իբրև գեղարվեստական մտածողության դրսևորման ու դաստիարակության հետաքրքիր մոտեցում:

Ներկաներին ողջունեց և ցուցահանդեսի բացման առիթով շնորհավորեց ֆակուլտետի փոխդեկան Արմինե Դալլաքյանը. «Մեր բոլորի աշխատանքը միտված է մատաղ սերնդի դաստիարակությանը, դպրոց-բուհ կապի ամրապնդմանը: Համալսարանի 95-ամյակին նվիրված ցուցահանդեսը երեխաների մտածողության ու հույզերի, կերպարվեստի հանդեպ սիրո արտացոլումն է: Ուրախ ենք ձեզ համալսարանում հյուրընկալելու համար և առաջիկայում ձեր մասնակցությամբ ակնկալում ենք նոր, առավել հետաքրքիր ձեռնարկներ»:

Ջոն Կիրակոսյանի անվան N 20 դպրոցի տնօրեն Անահիտ Խոսրովյանը խոստովանեց. «Ցուցահանդեսը նախ երեխաների մեջ սեր է արթնացնում դեպի նկարչություն առարկան, գեղագիտական ճաշակ ձևավորում: Շատ ոգևորված են հատկապես տղաները: Ցավոք, այսօր աշակերտները նախապատվությունը տալիս են բարձր տեխնոլոգիաներին, բայց նկարելը առողջ ապրելակերպի կարևոր դրսևորումներից է և, կարծում եմ, այն շատ անհրաժեշտ է դպրոցականներին: Իսկ ամենակարևորն այն է, որ մոռացված մի ճյուղի նորովի ուշադրություն է դարձվում»:

Նույն դպրոցի ուսուցչուհի Նառա Գևորգյանի կարծիքով նման ցուցահանդեսները երեխաների մեջ նկարելու, արարելու սեր ու ձգտում են առաջացնում, դաստիարակում են արժեքներ: Երեխաները սիրով են նկարում, իսկ հաճույքով կատարված աշխատանքն արդեն իսկ ձեռքբերում է:

Ցուցահանդեսն ամփոփվեց ստեղծագործությունների՝ տեսանյութի միջոցով ցուցադրումով, ապա հայտնի դարձան Երևանի 7 լավագույն և ակտիվ դպրոցները՝ հմ. 117, 20, 170, 198, 118, ՀՊՄՀ-ի ավագ դպրոց (վարժարանը), ՀՊՄՀ-ի հմ 57, որոնց տնօրեններին ու պատասխանատուներին ֆակուլտետի փոխդեկան Լուսինե Պողոսյանը ֆակուլտետի ղեկավարության անունից շնորհակալագրեր հանձնեց:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Բրոնզե կիսանդրին գրավ իր արժանի տեղը

Օրերս Մոսկվայում, Հայրենական մեծ պատերազմի կենտրոնական թանգարանում տեղի ունեցավ Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանի կիսանդրու բացման արարողությունը: Կիսանդրին Հայաստանի Հանրապետության նվերն է Ռուսաստանի Դաշնությանը. Խորհրդային Միության կրկնակի հերոսի 120-ամյակի կապակցությամբ: Հանդիսավոր միջոցառումը տեղի է ունեցել Հաղթանակի թանգարանի կենտրոնական սրահում՝ խորհրդային հրամանատարների պանթեոնում, որը ոգեկոչում է Մեծ հայրենականի հերոսների սխրագործությունը: Կիսանդրու հեղինակները Մանկավարժական համալսարանի կերպարվեստի ամբիոնի դոցենտ, քանդակագործ Միսաք Մելքոնյանն ու Աշոտ Թադևոսյանն են:

«Մինչ քանդակը ստեղծելը, թվում էր, թե ես նրան ճանաչում եմ, ծանոթ եմ նրա իրականացրած ռազմական գործունեությանն ու հերոսությանը, սակայն ստեղծագործելիս մարշալ Բաղրամյանին ինձ համար բացահայտեցի նորովի ու յուրովի. որպես մարդ, անհատականություն և կերպար, որն ունի նուրբ հոգի, զգացմունքային է, խորն ու խոցելի»,- ասաց Միսաք Մելքոնյանը և հավելեց, որ ստեղծագործելիս ցանկացել է վերարտադրել ոչ միայն կերպարի արտաքին նկարագրությունը, այլև նրա ներքին գեղեցկությունն ու ուժը:

Միսաք Մելքոնյանը խոստովանում է. ողջ ցուցադրության ընթացքում նկատելի է, որ այցելուներն ուշադրություն էին դարձնում քանդակի հատկապես աչքերին: Նա նկատում է, որ աչքերը քանդակելիս պետք է ակադեմիական այնպիսի ճշգրտությամբ դա անել, որ քեզ նայեն կենդանի մարդու աչքեր. դա արվեստի խնդիրներից է, իսկ այս պարագայում խնդիրը լուծվել էր: Ցուցադրության ավարտին թանգարանի տնօրենը խոստովանել է՝ վերջապես մեզ մոտ էլ եղավ «կենդանի Բաղրամյանը», իսկ մարշալի ընտանիքի անդամներն ուղղակի հավելել են՝ քանդակն առավել քան ստացված է ու խոսուն է:

Քանդակագործը խոստովանում է. հեշտ է բաժանվում իր ստեղծագործություններից, որովհետև մեծամասամբ տեսնում է, որ դրանք իրենց արժանի տեղն են գրավում:

«Ստեղծագործելիս ի սկզբանե գիտեի նպատակը, ուստի պատասխանատվությունն էլ ավելի մեծ էր՝ երկիր էր ներկայացվելու, այն ուներ պետական նշանակություն: Այդ տեսանկյունից ներդրել եմ առավելագույն ներուժ: Յուրաքանչյուր քանդակի հետ ապրումներ եմ ունենում: Կռվի դաշտ, իրավիճակներ, դրսևորումներ, զգացմունքներ… այսպես էլ կերտվեց Բաղրամյանի կերպարն ու մարդ տեսակը»,- ամփոփեց Միսաք Մելքոնյանը:

Կիսանդրին թանգարանին է հանձնել ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը: Բացման հանդիսավոր արարողությանը մասնակցել են նաև ՌԴ պաշտպանության նախարարի տեղակալ Ալեքսանդր Ֆոմինը, ՀՀ և ՌԴ ՊՆ բարձրաստիճան ներկայացուցիչներ, ՌԴ-ում ՀՀ դեսպան Վարդան Տողանյանը, Հաղթանակի հրամանատարների հետնորդները, վետերաններ, ռուսաստանյան հասարակական, գիտական ու մշակութային ոլորտի հայտնի գործիչներ, հայ համայնքային կառույցների ներկայացուցիչներ:

Հովհաննես Բաղրամյանի բրոնզե կիսանդրու տեղադրման նախաձեռնողը ՌԴ-ում ՀՀ դեսպանությունն է:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

Ուխտագնացություն

Հայկական պետական մանկավարժական համալսարանի կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի հոգեբանության բաժնի ուսանողները նոյեմբերի 8-ին հայոց պատմության ամբիոնի դասախոս պ.գ.թ., դոցենտ Արմինե Եփրիկյանի նախաձեռնությամբ կազմակերպեցին ուխտագնացություն դեպի Էջմիածին: Խումբը եղավ Սբ. Հռիփսիմե, Սբ. Գայանե, Սբ. Շողակաթ եկեղեցիներում, ապա Մայր Աթոռում:

Երիցս խորհրդավոր էր Գևորգյան ճեմարանի ներսում: Սարկավագ Հարությունը ներկայացրեց ճեմարանի պատմությունը, նրա ուղեկցությամբ ուսանողները շրջեցին լսարաններում, եղան ընթերցասրահում, հանդիսությունների սրահում, սպորտդահլիճում: Ճեմարանականներին տարաբնույթ հարցեր ուղղվեցին, և նրանց խորագետ, շրջահայաց ու տրամաբանված պատասխանները հիացրին բոլորին:

Հանդիպումը եզրափակվեց Հարություն սարկավագի հետ զրույցով և հուշ-խմբանկարով: Բոլորը տպավորված էին հատկապես ճեմարանով, որը պարուրեց առեղծվածային, միստիկ տրամադրությամբ և մտքերով:

Ամփոփելով տպավորությունները՝ ուսանողները հասկացան, որ հայի գոյության գաղտնիքը հզոր հավատի, մտքի թռիչքի և լավատեսության մեջ է:

Կարապետ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



71 տարեկան հասակում կյանքից հեռացավ Մանկավարժական համալսարանի Հոգեբանության և սոցիալական մանկավարժության ֆակուլտետի հոգեբանության ամբիոնի վաստակաշատ դասախոս Կարապետ Հարությունի Հարությունյանը:

Կ. Հարությունյանը ծնվել է 1946 թ. մայիսի 4-ին Վրացական ՍՍՀ-ի Ախալցխա քաղաքում: 1964-ին ավարտել է տեղի թիվ 3 հայկական դպրոցը, տեղափոխվելով Երևան, 1964-65թթ. աշխատել Երևանի ֆիզիկայի ինստիտուտում որպես փականագործ-հավաքող: 1965 թ. Կ. Հարությունյանն ընդունվել և 1969-ին ավարտել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի Մանկավարժության ֆակուլտետի դասվարական բաժինը:

Ինստիտուտն ավարտելուց հետո Կ.Հարությունյանը կարճ ժամանակ որպես լաբորանտ աշխատել է ՀՊՄՀ-ի մաթեմատիկայի դասավանդման ամբիոնում, ապա զորակոչվել բանակ: Զորացրվելուց հետո իր հետագա աշխատանքային գործունեությունն ընդմիշտ կապել է հարազատ բուհի հետ. աշխատել է որպես լաբորանտ նախ ռուսաց և օտար լեզուների ինտենսիվ ուսուցման, ապա ծրագրավորման մեթոդիկայի լաբորատորիաներում, իսկ 1972-1974 թթ.-ին՝ հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիայում որպես ավագ լաբորանտ: Մինչև 2005 թվականը աշխատում է նույն լաբորատորիայի կրտսեր գիտաշխատող:

2006-ին Կ. Հարությունյանն անցնում է դասախոսական աշխատանքի՝ նախ բուհի զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնում, հետո՝ տարիքային և մանկավարժական հոգեբանության ամբիոնում, իսկ 2016-ից՝ հոգեբանության ամբիոնում:

Կ. Հարությունյանը մասնակցել է բազմաթիվ գիտաժողովների, մի շարք գիտական հոդվածների հեղինակ է, իսկ 2015-ին լույս է տեսել նրա «Երեխայի շփման և մտավոր զարգացման կապը օնթոգենեզի վաղ փուլերում» վերնագրով արժեքավոր մենագրությունը:

Կ. Հարությունյանը ավիամոդելային սպորտի վարպետ էր, ՀՀ բազմակի չեմպիոն, 1991-1997 թթ. Եվրոպայի և Ասիայի առաջնությունների մասնակից և մեդալակիր:

Մեր անկեղծ ցավակցությունն ենք հայտնում Կ. Հարությունյանի ընտանիքին և հարազատներին:

Հոգեբանության և սոցիալական մանկավարժության ֆակուլտետ
Հոգեբանության ամբիոն

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՐԸ ԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Բանասիրական ֆակուլտետի ուսանողներն իրենց կիրառական պրակտիկան են անցկացնում Էջմիածնի «Էօրնեկեան» հանրակրթական ուսումնական հաստատությունում: Շատ կարևոր և պատասխանատու օր պրակտիկանտների համար. բուռն քննարկումներ, իրարամերժ կարծիքներ, տպավորիչ մտքեր, համոզիչ փաստեր. այն բոլոր անհրաժեշտ բաղադրիչները բանավեճն իրականացնելու համար, սակայն նոր, հեղինակային ձևաչափով՝ հարմարեցված մասնակիցների թվին (պրակտիկանտներ, աշակերտներ 9-րդ, 10-րդ, 11-րդ դասարաններից, յուրաքանչյուր թիմում ինը մասնակից):

1. Նոր տեխնոլոգիաների կիրառումը նպաստո՞ւմ է կրթական մակարդակի բարձրացմանը, թե՞ ոչ:
2. Դուք ընդունո՞ւմ եք առցանց ընթերցանությունը:
3. Նոր տեխնոլոգիաները կախվածություն առաջացնո՞ւմ են, թե՞ ոչ:
4. Ուսուցիչները, դասախոսները տիրապետո՞ւմ են համակարգչային գրագիտությանը, թե՞ ոչ:

Ահա այն չորս հիմնական հարցերը, որոնց շուրջ իրենց կարծիքները ներկայացրին կողմ և դեմ թիմերը:

Զրույց-բանավեճին ներկա էին ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի դեկան Ա. Գալստյանը, պրակտիկայի ղեկավար Լ. Գալստյանը, խմբի ղեկավար Ա. Յուզբաշյանը, կրթական հաստատության փոխտնօրեն Ն. Սարգսյանը, հայոց լեզվի և գրականության ուսուցչական անձնակազմը և ավագ դպրոցի աշակերտները:

Անչափ շնորհակալ ենք բոլորին ուշադրության, հատկացված ժամանակը տրամադրելու, ուսանողներին ուղղված բարձր գնահատանքի համար:

Սոսե ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄԻ ԼՈՒՍԱՆԿԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1965 թվականի շրջանավարտները կոնսերվատորիան ավարտելուց 20 տարի անց

Լուսանկարում հանրապետության անվանի երաժիշտներ են, որոնց մի մասը Մանկավարժական համալսարանի, մի մասն էլ կոնսերվատորիայի դասախոսներ են: Այստեղ են կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանը և նրա կինը, Խորեն Մեյխանեջյանը, ով աշխատել է ՀՊՄՀ երաժշտության ամբիոնի վարիչ (Հ. Չեքիջյանի երկրորդ դիրիժորն էր երկար տարիներ), Անահիտ Բերբերյանը և Վազգեն Մինասյանը, ովքեր մինչև այսօր աշխատում են Մանկավարժական համալսարանի երաժշտության բաժնում, Սիգիզմունդ Ներսիսյանը՝ Կուլտուրայի ֆակուլտետի, Կարինե Քարամյանը՝ երաժշտության ամբիոնի դաշնամուրային բաժնի դասախոսներ:

Լույս է տեսել



ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի երաժշտության ամբիոնի դոցենտ, ՀՀ մշակույթի նախարարության «Գրիգոր Նարեկացի» հուշամեդալիր Վազգեն Մինասյանի՝ գործիքային կատարումների համար գրված 7 գիրք: Դրանք արժեքավոր ձեռնարկներ են մասնագիտական դպրոցների և քոլեջների դասատուների, բարձրագույն ուսումնական հաստատությունների (Կոնսերվատորիայի, Մանկավարժական համալսարանի) դասախոսների և ուսանողների համար. Սայաթ-Նովայի երգերի գործիքային և վոկալ մշակումներ, Իտալական հանրահայտ երգերի, Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայից հատվածների, հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների դասական և ժողովրդական, ինչպես նաև բարդ անսամբլների փոխադրումներ և մշակումներ ֆլեյտայի և դաշնամուրի համար:

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 17.11. 2017 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am